

գՔրիստոսն ասէ . Ո՞ւր երթաս Տէր իմ . եւ նա
 ասէ . ի Հռոմ խաչիլ : Ասէ Պետրոս . Տէր
 միանգամ խաչեցար եւ դարձեա՞լ կամիս : Եւ
 ասէ Յիսուս . Դու ոչ կամիս խաչիլ . ես վասն
 քո խաչիմ : Եւ իմացեալ Պետրոս զբանն ան- 175
 կաւ յոտս Յիսուսի եւ ասէ . Տէր իմ եւ Աս-
 տուած , ոչ միայն նման քեզ խաչեցայց , այլ
 գլխիվայր նման Ադամայ : Եւ Յիսուս յայնժամ
 անյայտ եղեւ : Եւ Պետրոս զօրացեալ դարձաւ
 ի քաղաքն ուրախուեթեամբ , զոր կալեալ զնա 180
 դահիճքն տարան առ պեղծն Ներոն . եւ նա
 հրամայեաց խաչել . եւ տարեալ ի տեղին մա-
 հապարտաց կամէին խաչել զնա . եւ նա աղա-
 չէր զդահիճսն , թէ Մի զիս ըստ Տեառն իմոյ
 խաչէք գլխիվեր , զի չեմ արժանի , այլ գլխի- 185
 վայր . եւ անօրէնքն այնպէս արարին : Եւ ինչ
 բան եւ զործ որ տեղ որ եղել է , նա զամէնն
 գրած եւ նաշխած եւ քանդակած է եւ եկեղե-
 ցիք շինած : Փառք Աստուծոյ անզրաւ : Եւ
 եկեալ ի տուն Հանկաք առուրս ինչ : 190

SAN GIUSEPPE DEI FALEGNAMI,
 CARCER MAMERTINUS

Եւ զնացաք օր մի ի բանտն Պետրոսի . որ
 էր փառաւոր եկեղեցի . եւ մտեալ ի ներս՝
 տեսաք զընակուեթիւնս Հաբեղայից , վայելուչ
 եւ ծաղկաւէտ իբրեւ զըրախտն Ադամայ : Եւ
 ցուցին մեզ մատուռ մի գեղեցիկ բոլորածեւ . 5
 եւ զդուռն բոլոր երկաթապատ . եւ ասին աստ